

Վահան Վ. Ենգիդունյան

## ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՀՀ մարզերի և խոշորացված համայնքների օրինակով\*

**Բանալի բառեր** – խոշորացված համայնք, մարզ, տարածքային կառավարում, խոցելիություն, տարածական կազմակերպում, սոցիալ-տարածական պլանավորում, տարածական վերահսկում, կլաստերային վերլուծություն, հարմարվողականության կարողություն, տեղի զգացում, տարածական ներգրավվածություն, տեղի առաջնորդություն:

Ներածություն

Բնակավայրերի կայուն և արդյունավետ զարգացումը անհնար է պատկերացնել առանց տեղի բնակչության բարեկեցության շարունակական բարելավման: Այս համատեքստում բնակավայրերի տարածքային կառավարման գործընթացների առաջնային նպատակը բխում է հարմարավետ և ֆունկցիոնալ միջավայրի ստեղծման հրամայականից, ինչը կարող է հնարավոր դարձնել բնակչության հիմնարար կարիքների բավարարումը:

Բնակավայրերի տարածքային կառավարումը բավականին զգայուն գործընթաց է, քանզի յուրաքանչյուր չհիմնավորված փոփոխություն կարող է էական վնաս հասցնել տեղի բնակչության ամենօրյա գործառնություններին՝ հանգեցնելով տարածական օտարման և բարձրացնելով բնակավայրի խոցելիությունը հնարավոր

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 23.09.2024:

փոփոխությունների համատեքստում: Վերոնշյալ ռիսկերի կառավարման տեսանկյունից՝ անհրաժեշտ է, որ տարածքային կառավարման ռազմավարության մշակման նախնական փուլերում մասնագիտական մոտեցումները ներդաշնակեցվեն բնակավայրերի վերարտադրության ներծին և արտածին գործոններին: Քանի որ տարածքային կառավարումը դիտելի է ինչպես տարածական կազմակերպման, այնպես էլ սոցիալ-տարածական ծրագրման և տարածական վերահսկողության չափումներում, ապա նշյալ ներծին և արտածին գործոնները ևս բխում են այս չափումներից<sup>1</sup>: Բնակավայրերի տարածքային կառավարման շրջանակներում ներծին գործոնների համակարգման տեսանկյունից ուշադրության է արժանի սոցիալ-տարածական պլանավորման բաղկացուցիչ համարվող հարմարվողականության կարողության հասկացությոթ: Հարմարվողականության կարողությունը, ըստ Յակուի և Լայնամի «...ներառում է համակարգի այն հատկությունները, որոնք թույլ են տալիս նրան փոփոխել ինքնիրեն ընկալվող կամ իրական սթրեսի պայաններում՝ պահպանելու կամ ցանկալի վիճակի հասնելու համար»<sup>2</sup>: Սոցիոլոգիական գիտելիքի տեսանկյունից՝ մասանվորապես հարմարվողականության կարողությունը քննարկելի է խոցելիության հետ կապի համատեքստում, որտեղ հարմարվողականությունը դիտարկվում է որպես խոցելիության հակադարձ համեմատական մեծություն: Հարմարվողականության կարողությանն առնչվող հետազոտությունները ցույց են տալիս, որ այն առկա է համայնքային և տնային տնտեսությունների մակարդակում և հետևապես յուրաքանչյուր մակարդակում հնարավոր է կառուցել հարմարվողականության կարողությունը չափող ինդիկատորների համակարգ: Մասանվորապես S/S-ների մակարդակում այդ ինդիկատորները վերաբերում են փոփոխությունների նկատմամբ բնակչության տեղեկացվածությանը, գիտելիքներին, հմտություններին, S/S կեցության դիվերսիֆիկացվածությանը, մատուցվող ծառայությունների նկատմամբ հասանե-

---

1 Տե՛ս **Yengidunyan V. V.**, Territorial Management in The Sphere of Social-Spatial Planning, Spatial Organization and Control as A Practice of Reproduction of The Social Space Journal of Sociology: Bulletin of Yerevan University 2024, Vol. 15, N 1(39), p.84.

2 **Jakku E., Lynam T.**, “What Is Adaptive Capacity?,” Report for the South East Queensland Climate Adaptation Research Initiative (Australia: CSIRO Climate Adaptation Research Flagship, 2010), p.10, [https://www.researchgate.net/publication/259117037\\_What\\_is\\_adaptive\\_capacity](https://www.researchgate.net/publication/259117037_What_is_adaptive_capacity).

լիությանը, գենդերային հավասարությանը և այլն<sup>3</sup>: Հարմարվողականության կարողությունը գնահատվում է, նաև բնակչության սոցիալ-տնտեսական կարգավիճակը բնութագրող ցուցանիշներով, ինչպիսիք են՝ 25 տարիքից բարձր բնակչության կրթական մակարդակը, գործազրկության մակարդակը, բնակչության մեջ հաշմանդամների տոկոսը, S/S միջին եկամուտը, S/S տոկոսը, ովքեր բնակվում են սեփական տանը և այլն<sup>4</sup>:

Հարմարվողականության կարողության վերաբերյալ վերոնշյալ մոտեցումները թույլ են տալիս պնդել, որ սույն բաղադրիչն ըստ էության վերագրվում է փոփոխությունների նկատմամբ բնակիչների ձկունությանը (resilience), որը «... անբարենպաստ իրավիճակների արձագանքման, դիմակայման և վերականգնման համար հասանելի ռեսուրսների օգտագործման համայնքի կայուն ունակության ցուցանիշն է»<sup>5</sup>: Քանզի հարմարվողականության կարողությունը ժամանակագրորեն վարիատիվ ինդիկատորների միջոցով գնահատում է փոփոխությունների նկատմամբ բնակչության խոցելիությունը, հետևապես այն բնութագրում է ձկունության դինամիկ ասպեկտը: Այսպիսով հարմարվողականության և ձկունության միջև փոխկապվածությունը ընդգծում է տարածական պլանավորման քայլերի սահմանման և դրանց իրականացման արդյունքների գնահատման չափելիությունը, ինչն իր հերթին թույլ է տալիս իրականացնել տվյալահեն զարգացման ծրագրեր՝ թիրախավորելով հիմնական առաջնահերթությունները: Խոցելիությանն առնչվող հաջորդ բաղադրիչներն են տեղի զգացումը և տարածական ներգրավվածությունը: Տեղի զգացումը կարելի է սահմանել որպես «... ֆիզիկական տարածության վերաբերյալ մարդկանց սուբյեկտիվ ընկալումների և .... գիտակցված զգացմունքների ամբողջություն ... այն ներառում է մեկնաբանական հայացք և զգացմունքային ռեակցիա միջավայրի

3Տե՛ս **CARE International**, “Framework of Milestones and Indicators for Community-Based Adaptation” (CARE Climate Change, 2022), 19p. <https://careclimatechange.org/wp-content/uploads/2022/12/2022-CARE-Framework-of-Milestones-and-Indicators-for-CBA-Copy.pdf>.

4Տե՛ս **EdgemonL., Freeman C., et al.**, “Community Resilience Indicator Analysis: County-Level Analysis of Commonly Used Indicators From Peer-Reviewed Research” (USA: Argonne National Laboratory, 2018), 88p.[https://www.researchgate.net/publication/331232094\\_Community\\_Resilience\\_Indicator\\_Analysis\\_County-Level\\_Analysis\\_of\\_Commonly\\_Used\\_Indicators\\_From\\_Peer-Reviewed\\_Research](https://www.researchgate.net/publication/331232094_Community_Resilience_Indicator_Analysis_County-Level_Analysis_of_Commonly_Used_Indicators_From_Peer-Reviewed_Research).

5**BosherL. S., Chmutina K.**, *Disaster Risk Reduction for the Built Environment*, 1st ed. (Wiley, 2017), p.32, <https://doi.org/10.1002/9781119233015>.

նկատմամբ»<sup>6</sup>: Այն բնութագրում է տարածության հետ անհատական զգացմունքային կապվածությունը, որն ամրապնդվում է այդ տարածությունում գործառու համայնքի հետ նույնականացմամբ: Տարածական ներգրավվածության դեպքում գործ ունենք բնակավայրերում բնակիչների ֆիզիկական, տեղեկատվական և սոցիալական ներգրավվածությունների հետ: Ֆիզիկական ներգրավվածությունը առավելապես բնորոշվում է տարածության ճանաչողությամբ և իմաստավորմամբ, մինչդեռ տեղեկատվական ներգրավվածությունը վերաբերում է բնակավայրերում տեղի ունեցող փոփոխությունների հանդեպ բնակչության տեղեկատվական հետաքրքրվածությանն ու ակտիվությանը:

Վերջապես, սոցիալական ներգրավվածության դեպքում չափվում է բնակիչների ինչպես պատրաստակամությունը, այնպես էլ փաստացի ներգրավվածությունը բնակավայրում տեղի ունեցող գործընթացներում: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ, եթե տեղի զգացման դեպքում բնակավայրերի հետ բնակիչների փոխադրեցությունները կրում են պասիվ բնույթ, ապա տարածական ներգրավվածության դեպքում դրանք առավելապես ակտիվ են: Խոցելիության կապվածությունը վերոնշյալ ֆենոմենների հետ պայմանավորվում է նրանով, որ տեղի զգացման ցածր մակարդակի դեպքում ցածր է բնակիչների նույնականացումը իրենց բնակավայրերի հետ, հետևապես, բնակավայրերում տեղի ունեցող տարաբնույթ գործընթացներում նրանք միտված են զբաղեցնելու պասիվ դիրքավորում: Քաղաքացիական այսպիսի արցունքալի պարագայում բնակչությունը նաև անհրաժեշտ կերպով չի ներգրավվում բնակավայրում իրականացվող փոփոխություններին առնչվող տեղեկատվական հոսքերում ինչը էապես սահմանափակում է փոփոխություններին նրանց ակտիվ մասնակցությունը: Այսպիսով ստեղծվում է իրավիճակ, երբ բնակավայրերում տարածքային կառավարման համատեքստում իրականացվող փոփոխությունները չեն հիմնվում հասարակական սպասումների վրա և վտանգում են փոփոխությունների առաջնային սպառողների բնականոն գործունեությունը:

---

6Hummon D. M., “Community Attachment: Local Sentiment and Sense of Place.,” in *Place Attachment*, ed. Irwin Altman and Setha Low, Reprint of the original 1 st ed. (S.I.: Springer US, 2012), p.262.

Տարածական վերահսկման համատեքստում խոցելիության հետազոտությունը առնչվում է պետական ինստիտուտների և ՏԻՄ մարմինների կողմից իրականացվող գործառնություններին, ինչպես նաև տեղի առաջնորդության դրսևորումներին: Պետության դերակատարությունը բնակավայրերի խոցելիության նվազեցման համատեքստում առավելապես վերաբերվում է տարածքային կառավարման իրավաքաղաքական անհրաժեշտ միջավայրի ստեղծմանը, որտեղ բոլորի համար կգործեն խաղի ընդհանուր կանոններ, իսկ անհրաժեշտության դեպքում կկիրառվեն լրացուցիչ գործիքակազմեր՝ բարձր խոցելիություն ունեցող բնակավայրերի կայուն զարգացման համար: Տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում բնակավայրերի խոցելիության նվազեցումը հնարավոր է հորիզոնական և ուղղահայաց հաղորդակցման միջոցով: Հորիզոնական հաղորդակցման շնորհիվ համակողմանիորեն հասցեագրվում են տեղի բնակչության կարիքները, կայացվում ու գործարկվում են լուծումների արդյունավետ մեխանիզմներ: Ուղղահայաց հաղորդակցման ժամանակ ՏԻՄ-երը վերածվում են պետություն-բնակչություն կապը ապահովող գործակալների, որոնց նպատակն է զարգացնել բնակավայրերում տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքները, ինչպես նաև տրամադրել որակյալ ծառայություններ: Չնայած նրան, որ պետությունն ու տեղական ինքնակառավարման մարմիններն են տարածքային կառավարման հիմնական ինստիտուցիոնալ մարմինները, այնուամենայնիվ ոչ պակաս կարևոր են նաև կոնկրետ բնակավայրերի առաջնորդները, որոնք իրենց ուրույն ազդեցությունն են թողնում վերոնշյալ գործընթացների վրա: Այսպիսով, գործ ունենք տեղի առաջնորդության մոտեցման հետ, որի համաձայն՝ տեղի առաջնորդները, նրանք են, ովքեր «...ցուցաբերում են ընդհանուր առաջնորդական գծեր, բայց մոտիվացված են տեղի նկատմամբ անձնական կապով, կարծում են, որ ունեն քաղաքացիական պատասխանատվություն դրա նկատմամբ և ունեն մասնագիտական հմտություններ և գիտելիքներ բարձր մակարդակի իրավասությամբ ստանձնելու իրենց աշխատանքը»<sup>7</sup>:

<sup>7</sup>Colledge M., Parker C., et al., “Place Leadership in English Local Authorities: A Critical Success Factor for Vital and Viable High Streets,” p.11.

Տեղի առաջնորդների կողմից իրականացվող գործառնությունները, ըստ Քոլիջի և մյուսների<sup>8</sup>, լինում են՝ նախաձեռնողական, համագործակցության զարգացման և համակարգի ու գործառնության: Նախաձեռնողականության գործառնությամբ ներառում է այնպիսի ենթագործառնություններ, ինչպիսիք են՝ այլ շահառուների ներգրավումը, ոգեշնչումը, տեսլականի առկայությունը, հաղորդակցումը և այլն: Միևնույն ժամանակ համագործակցության զարգացումը ենթադրում է կրեատիվության, որոշումներ կայացնելու, կապեր ստեղծելու, իսկ համակարգի և գործառնության գործառնությամբ՝ ռազմավարության, կառավարման, կարգավորման ենթագործառնությունները: Նշյալ գործառնությունների առկայությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տեղի առաջնորդները բնակչության տարբեր շրջականներում կարող են տարբեր սուբյեկտներ լինել և չնույնացվել պետական կամ ՏԻՄ ներկայացուցիչների հետ: Միևնույն ժամանակ, սակայն, պետական ինստիտուտներ-ՏԻՄ-տեղի առաջնորդներ կապի միջոցով է հնարավոր օպերատիվ կերպով հասցեագրել տարածքային կառավարման համատեքստում բնակչության կարիքները և գտնել արդյունավետ լուծումներ՝ նվազեցնելով բնակավայրերի խոցելիության անկառավարելիության ռիսկը:

Խոցելիության չափումների վերջին համախումբը վերաբերում է տարածական կազմակերպմանը: Այս դեպքում խոցելիության գնահատումը իրականացվում է բնակչության ֆիզիկական վերաբաշխման, առողջապահական, կրթական և սոցիալ-տնտեսական մի շարք ցուցիչների միջոցով:

Տարածքային կառավարման համատեքստում փոփոխությունների նկատմամբ բնակավայրերի խոցելիության հիմնախնդիրը սուր է արտահայտված մասնավորապես ՀՀ բնակավայրերում, որոնք ենթարկվել են համայնքային խոշորացման: 2021 թ. ավարտված համայնքային խոշորացման ռազմավարությունը մի քանի անգամ ենթարկվել է ինչպես ընթացակարգային, այնպես էլ կոնցեպտուալ փոփոխությունների, ինչի արդյունքում տարբեր բնակավայրեր խոշորացվել են տարբեր սկզբունքներով: Վերջիններս հատկապես

---

8 St. u Colledge M., Parker C., et al., “Place Leadership in English Local Authorities: A Critical Success Factor for Vital and Viable High Streets,” Research Report (UK: Manchester Metropolitan University, New York University, November 2022), 26p.<https://squidex.mkmapps.com/api/assets/ipm/place-leadership-in-english-local-authorities-hstf.pdf>.

ցույց են տալիս գործընթացների բարձր սթրեսայնությունն ու ռիսկայնությունը: ՀՀ-ում համայնքային խոշորացումն արդեն իրողություն է, և չնայած իրականացված տեղական բազմաթիվ հետազոտություններին՝ առկա է գիտելիքի բաց, հատկապես այն հարցերում, թե ստեղծված իրավիճակում ինչպիսին է խոցելիությունը ՀՀ մարզերում և դրանց խոշորացված համայնքներում, դրսևորման առանձնահատկությունները, և որոնք են այն բնակավայրերը, որոնք ցուցաբերում են բազմաչափ խոցելիություն հնարավոր փոփոխությունների իրականացման համատեքստում: Իրականացված հետազոտության նպատակն է անդրադառնալ սույն հարցադրումներին և տրամադրել անհրաժեշտ տվյալներ, որոնք կարող են կիրառվել տարածքային կառավարման հետագա գործընթացների նախագծման ժամանակ:

**Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բոլոր մարզերում ընդգրկելով 19 խոշորացված համայնքների բնակավայրեր: Կիրառվել են ինչպես քանակական հարցման, այնպես էլ տվյալների երկրորդային վերլուծության մեթոդները: Ընտրանքը կառուցվել է խառը ընտրանքների մեթոդաբանությամբ, որի համաձայն՝ նախ ձևավորվել է շերտավոր համամասնական ընտրանք, ապա դրա հիման վրա՝ կլասստերային ընտրանք, յուրաքանչյուր կլաստերի ծավալը սահմանելով 14: Ընտրանքի ընդհանուր ծավալը 600 է:**

1. Խոցելիությունը տարածական կազմակերպման համատեքստում

ՀՀ բնակավայրերի տարածական կազմակերպման հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ ՀՀ մշտական բնակչության ամենամեծ տեսակարար կշիռը Արմավիրի մարզինն է (15.4%): Նրան հաջորդում են Արարատի և Կոտայքի մարզերը՝ համապատասխանաբար 14.7% և 14.1%: Մինչև 5000 բնակչություն ունեցող խոշորացված համայնքների թվով առաջատար է Արգածոտնի մարզը (4 համայնք կամ 40%): 5001-10000 բնակչություն ունեցող խոշորացված համայնքների ամենամեծ մասնաբաժինը Սյունիքի մարզինն է (33.3% կամ 4 համայնք), իսկ 10001-20000 բնակչություն ունե-

ցող խոշորացված համայնքների առումով՝ Վայոց Ձորի մարզը 27.3%: Եթե 5001-20000 բնակչությամբ խոշորացված համայնքների թվով առաջատարի դիրքեր են զբաղեցնում ՀՀ հարավային մարզերը, ապա 20001-30000 բնակչությամբ խոշորացված համայնքների դեպքում առաջատար է Տավուշի (25%), իսկ 70001-100000-ի դեպքում՝ Արարատի մարզը (28.6%): Վերջապես, հայացք նետելով առանձին խոշորացված համայնքների բնակիչների թվաքանակներին՝ պարզ է դառնում, որ ամենաշատ բնակչություն ունեցող խոշորացված համայնքը Արարատի մարզի Արտաշատ համայնքն է, որտեղ բնակվում է 91404 անձ, իսկ ամենաքիչ բնակեցված համայնքը՝ Արագածոտնի մարզի Մեծամոր համայնքը (419 բնակիչ)<sup>9</sup>: Ընդհանրացնելով ՀՀ մարզերում և խոշորացված համայնքներում բնակչության բաշխվածության առկա պատկերը՝ հաշվարկվել է նաև ըստ մարզի միջինում 1 բնակավայրին բաժին ընկնող բնակչության ցուցանիշը: Ստացված տվյալները փաստում են, որ 1 բնակավայրին բաժին ընկնող բնակչության թվաքանակով ամենաբարձր ցուցանիշը պատկանում է Կոտայքի մարզին՝ կազմելով 3883.3 մարդ/բնակավայր: Կոտայքին հաջորդում են Արմավիրի, Արարատի և Գեղարքունիքի մարզերը՝ համապատասխանաբար 2953.3 մարդ/բնակավայր, 2786.6 մարդ/բնակավայր և 2330.9 մարդ/բնակավայր արդյունքներով: Ամենացածր ցուցանիշները գրանցվել են Սյունիքի և Վայոց Ձոր մարզերում, որտեղ մեկ բնակավայրին միջինում բաժին են ընկնում՝ համապատասխանաբար 948.6 և 933.1 բնակիչ: Արձանագրված արդյունքները մտածելու տեղիք են տալիս ՀՀ մարզերի և դրանք կազմող խոշորացված համայնքների ժողովրդագրական վիճակի մասին: Մասնավորապես ՀՀ հարավ-արևմտյան (Արարատ, Արմավիր), և հուսիս-արևելյան (Գեղարունք, Տավուշ) մարզերի ու հարավային (Վայոց Ձոր, Սյունիք) մարզերի միջև ըստ բնակչության խիստ անհավասար բաշխվածությունը էական ռիսկ է տարածքների ռեսուրսների և հնարավորությունների կառավարման համար: Ուրբանիզացման անկառավարելի գործընթացները, որոնց համատեքստում բնակչությունը կենտրոնանում է կոնկրետ բնակավայրերում, իսկ մնացյալ բնակավայրերում վատթարանում է ժողովրդագրա-

9 Տե՛ս **ԱՐՄՍՏԱՏ**, «Տարածքային Վիճակագրություն», <https://armstat.am/am/?nid=130>, (մուտք՝ 07.07.2024)



կան վիճակը, խախտում են բնակավայրերի զարգացման հավասար հնարավորությունների ապահովման սկզբունքը, քանզի կարճաժամկետ ռազմավարության հեռանկարում նվազող բնակչություն ունեցող բնակավայրերում նպատակահարմար չէ իրականացնել լայնամասշտաբ ծրագրեր:

Իրականացված հետազոտության համատեքստում առանձնացված 19 խոշորացված համայնքներում պարզ խտությունների ընդհանուր նկարագրական վերլուծությունից պարզ է դառնում, որ խտության ամենատարածված միջակայքերն են մինչև 1000, 10001–20000 և 20001 ու ավելի մարդ/քառ. կմ (յուրաքանչյուրը՝ 21.1%): Ընդ որում, մինչև 1000 մարդ/քառ. կմ ունեցող խոշորացված համայնքներ արձանագրվել են Արագածոտնի, Գեղարունիքի, Վայոց Ձորի և Լոռու մարզերում, իսկ 20001 և ավելի մարդ/քառ. կմ՝ Արարատի, Շիրակի, Արմավիրի և Տավուշի մարզերում: Կառուցված տարածություններում բնակչության խտության համատեքստում պատկերը այլ է: Այստեղ խտության ամենատարածված միջակայքը 20001 և ավելի մարդ/քառ. կմ (31.6%), որը գրանցվել է Արարատի, Շիրակի, Արմավիրի, Տավուշի և Լոռու մարզերում: Ունենալով ընտրված խոշորացված համայնքներում բնակչության պարզ և կառուցված միջավայրում խտությունները՝ յուրաքանչյուր խոշորացված համայնքի համար չափվել է բնակչության տարածական կենտրոնայնությունը նկարագրող դիսպերսիոն ինդեքսը: Ստացված ցուցանիշների համաձայն դիսպերսիոն ինդեքսի ամենաբարձր արդյունքը գրանցվել է Սյունիքի Տաթև խոշորացված համայնքում (8.62), իսկ ամենացածր արդյունքը՝ Լոռու մարզի Վանաձոր խոշորացված համայնքում (0.29):

Տարածական կազմակերպման հաջորդ՝ սոցիալ-տնտեսական շերտում դիտարկվում են աշխատանքային ռեսուրսների վերաբաշխման, բնակարանային ֆոնդի և կեցությանը վերաբերող ինդիկատորները: Այսպիսով, աշխատանքային ռեսուրսների վերաբաշխման համատեքստում առանձնացվում են ՀՀ մարզերի ընդհանուր ցուցանիշների նկատմամբ աշխատանքային ռեսուրսների, աշխատուժի մասնաբաժինները, ինչպես նաև աշխատուժի մասնակցության մակարդակը: ՀՀ մարզերի համաձայն իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխատուժի ամենամեծ մասնաբաժին

ունեցողները երեք մարզեր են՝ Արմավիր (18.1%), Արարատ (13.8%) և Կոտայք (12.4%), իսկ ամենափոքր մասնաբաժինը պատկանում է Վայոց Ձորին՝ կազմելով 2.6%: Պատկերը այլ է, երբ տվյալները դիտարկվում են ըստ բնակավայրի տիպի: Քաղաքային բնակավայրերի համատեքստում աշխատուժի ամենամեծ մասնաբաժինն ունեն Կոտայքի (17.4%), Լոռու (15.6%) և Սյունիքի (14.1%) մարզերը, իսկ գյուղական բնակավայրերում՝ Արմավիրի (22.1%), Արարատի (17.1%) և Գեղարքունիքի (12.9%) մարզերը: Ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում ևս ամենացածր ցուցանիշները գրանցվել են Վայոց Ձորի մարզում (համապատասխանաբար 2.3% և 2.8%)<sup>10</sup>: Աշխատանքային ռեսուրսների ամենամեծ մասնաբաժինն ունի Արարատի մարզը (14%), որին հաջորդում են Արմավիրի (13.7%), Կոտայքի (13.2%) և Շիրակի (12.5%) մարզերը: Զուգահեռաբար՝ աշխատանքային ռեսուրսների ամենացածր մակարդակը գրանցվել է Վայոց Ձորում՝ կազմելով 2.5%: Աշխատանքային ռեսուրսների վերաբաշխման վերջին ինդիկատորը աշխատուժի մասնակցության մակարդակն է: Երկրորդային տվյալների վերլուծությամբ պարզ է դառնում, որ աշխատուժի մասնակցության մակարդակով առաջատար է Արմավիրի մարզը (78.5%), որին հաջորդում են Սյունիքի (71.6%) և Արագածոտնի (65.5%) մարզերը<sup>11</sup>:

Տարածական կազմակերպման սոցիալ-տնտեսական շերտի հաջորդ բաղադրիչը բնակֆոնդը և կեցությունն են: Առկա տվյալների համաձայն՝ բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսով ապահովվածության ամենաբարձր ցուցանիշը դիտվում է Տավուշի մարզում՝ կազմելով 58.8 քառ. մ.: Տավուշին հաջորդում են Վայոց Ձորի (52.8 քառ. մ.) և Արագածոտնի (50.1 քառ. մ.) մարզերը, իսկ ամենացածր ցուցանիշը պատկանում է Գեղարքունիքի մարզին (33.1 քառ. մ.): Սույն ինդիկատորի ցուցանիշների հնգամյա տվյալները հավաստում են, որ 2018 և 2022 թվականների միջև խզվածքի տեսանկյունից ամենաբարձր դրական ցուցանիշները գրանցվել են Վայոց Ձորի (+12.9) և Տավուշի (+10.5) մարզերում, իսկ ամենացածրը՝ Գեղարքունիքում (0.4): Պատկերը այլ է գյուղական և քաղաքային

10 Տե՛ս **ԱՐՄՍՏԱՏ**, «Աշխատանքային Ռեսուրսներ/Աշխատուժ» 2022, [https://armstat.am/file/article/lab\\_market\\_2023\\_2.pdf](https://armstat.am/file/article/lab_market_2023_2.pdf), (մուտք՝ 20.04.2024):  
 11 Տե՛ս **ԱՐՄՍՏԱՏ**, «Աշխատանքային Ռեսուրսներ» 2022, [https://armstat.am/file/article/lab\\_market\\_2023\\_1.pdf](https://armstat.am/file/article/lab_market_2023_1.pdf), (մուտք՝ 20.04.2024):

բնակավայրերում: Եթե քաղաքային բնակավայրերում առաջատար դիրք է զբաղեցնում Արագածոտնի մարզը՝ 64 քառ. մ. արժեքով, ապա գյուղական բնակավայրերում ամենաբարձր ցուցանիշը Տավուշի մարզինն է (65.1 քառ. մ.): Հատկանշական է, որ թեև քաղաքային բնակավայրերում ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Արագածոտնի մարզում, սակայն հնգամյա կտրվածքով այնտեղ գրանցվել է ցուցանիշի ամենամեծ անկումը (-5.5), մինչդեռ Տավուշում գրանցվել է ամենամեծ աճը՝ +10.4: Գյուղական բնակավայրերում ամենամեծ աճը գրանցվել է Վայոց Ձորում (+15.6), իսկ ամենամեծ անկումը Գեղարունիքում (-0.5)<sup>12</sup>:

Տարածական կազմակերպման հաջորդ՝ կրթական բաղադրիչում վերլուծվել են մի շարք այնպիսի տվյալներ, ինչպիսիք են, օրինակ՝ մեկ կրթական կառույցի հաշվով կրթություն ստացողների միջին հաճախելիությունը: Գրանցված արդյունքների համաձայն՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում հաճախելիության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Կոտայքի մարզում՝ կազմելով 400.3 անձ/հաստատություն, այնուհետև Արարատի (349.3 անձ/հաստատություն) և Արմավիրի (317.5 անձ/հաստատություն) մարզերը: Այս ինդիկատորով ամենացածր ցուցանիշը Վայոց Ձորինն է (139.8 անձ/հաստատություն): Մեկ միջին մասնագիտական կրթական կառույց հաճախելու ցուցանիշով առաջատար է Արարատի մարզը, որտեղ ցուցանիշը հասնում է 437.8 անձ/հաստատություն: Այս դեպքում ամենացածր ցուցանիշը գրանցվել է Արագածոտնում (97 անձ/հաստատություն): Վերջապես, խոսելով բարձրագույն ուսումնական հաստատությունների մասին՝ նշենք, որ հաճախելիության ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են Տավուշի (585.5

12 Օգտագործվել են **ԱՐՄՍՏԱՏ**, «ՀՀ Բնակարանային Ֆոնդը և Կոմունալ Տնտեսությունը 2022թ.», [https://armstat.am/file/article/housing\\_stock\\_2022\\_1.am.pdf](https://armstat.am/file/article/housing_stock_2022_1.am.pdf), **ԱՐՄՍՏԱՏ**, «ՀՀ Բնակարանային Ֆոնդը և Կոմունալ Տնտեսությունը 2021թ.» 2021, [https://armstat.am/file/article/housing\\_stock\\_2021\\_1.am.pdf](https://armstat.am/file/article/housing_stock_2021_1.am.pdf), **ԱՐՄՍՏԱՏ**, «ՀՀ Բնակարանային Ֆոնդը և Կոմունալ Տնտեսությունը 2020թ.» 2020, [https://armstat.am/file/article/bnakfond\\_2021\\_1.pdf](https://armstat.am/file/article/bnakfond_2021_1.pdf), **ԱՐՄՍՏԱՏ**, «ՀՀ Բնակարանային Ֆոնդը և Կոմունալ Տնտեսությունը 2019թ.» 2019, [https://armstat.am/file/article/bn\\_fond\\_2020\\_1.pdf](https://armstat.am/file/article/bn_fond_2020_1.pdf), **ԱՐՄՍՏԱՏ**, «Բնակարանային Ֆոնդը 2018 Թվականին.» 2018, [https://armstat.am/file/article/sv\\_06\\_19a\\_5250.pdf](https://armstat.am/file/article/sv_06_19a_5250.pdf). տվյալները, (մուտք՝ 20.04.2024):

անձ/հաստատություն) և Լոռու (538.8 անձ/հաստատություն) մարզերում, իսկ ամենացածրը՝ Արմավիրում (77 անձ/հաստատություն):

Հաճախելիությունից զատ՝ վերլուծվել է նաև մակավարժադասախոսական կազմի ծանրաբեռնվածությունը, մասնավորապես՝ մեկ մանկավարժին/դասախոսին բաժին ընկնող կրթություն ստացողների թիվը: Տվյալները արձանագրում են, որ հանրակրթական հաստատություններում մանկավարժական ծանրաբեռնվածության ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվում են Արարատի (15.8 աշակերտ/մանկավարժ), Կոտայքի (15.5 աշակերտ/մանկավարժ) և Արմավիրի (13.8 աշակերտ/մանկավարժ) մարզերում: Միննույն ժամանակ՝ ամենաքիչ ծանրաբեռնվածն են Արագածոտնի հանրակրթական հաստատությունների մանկավարժները (9.2 աշակերտ/մանկավարժ): Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դեպքում ամենաբարձր արդյունքը գրանցվում է Արարատի (9 աշակերտ/մանկավարժ) մարզում, իսկ ամենացածրը՝ Տավուշում (4.2 աշակերտ/մանկավարժ): ԲՈՒՀ-երում, սակայն, այլ պատկեր է: Եթե դասախոսների ծանրաբեռնվածության մակարդակով առաջատար է Կոտայքի մարզը (10.7 ուսանող/դասախոս), ապա ամենացածր ցուցանիշը պատկանում է Արմավիրին (3.7 ուսանող/դասախոս):

Վերջապես, տարածական կազմակերպման վերջին, բայց ոչ պակաս կարևոր բաղադրիչ է առողջապահականը: Եթե միջին բուժանձնակազմի շրջանակներում ամենաբարձր ցուցանիշն ունի Շիրակի մարզը (54.2), ապա բժիշկների թվաքանակով առաջատարն է Լոռու մարզը (25.6): Ուշադրության է արժանի այն, որ թե՛ միջին բուժանձնակազմի և թե՛ բժիշկների թվով ամենացածր ցուցանիշները գրանցվել են Արմավիրի մարզում (միջին բուժանձնակազմ՝ 31.1 և բժիշկներ՝ 15.6): 10000 բնակչի հաշվով հիվանդանոցային մահճակալների թվով կրկին ամենացածր ցուցանիշը գրանցվել է Արմավիրում (13.9), մինչդեռ այս ինդիկատորով ամենաբարձր արդյունքը պատկանում է Շիրակի մարզին (32.7)<sup>13</sup>:

---

13 Տե՛ս **ԱՐՄՍՍՏԱՏ**, «Անցիպական Ոլորտ» 2022, [https://armstat.am/file/article/marzer\\_2023\\_15.pdf](https://armstat.am/file/article/marzer_2023_15.pdf), (մուտք՝ 20.04.2024):

## 2. Խոցելիությունը սոցիալ-տարածական պլանավորման համատեքստում

Անդրադառնալով հարմարվողականության կարողությանը, նշենք, որ այն ներկայացվում է սոցիալ-տնտեսական, կրթական և առողջապահական ցուցանիշների և դրանց միջև առկա փոխազդեցությունների միջոցով: Ըստ կրթական մակարդակի բաշխվածության, ո՞ր հարցման մասնակիցների 50.7% ունի միջնակարգ կրթություն, մինչդեռ բարձրագույն և հետբուհական կրթություն ստացողների մասնաբաժինը 23.2% է: Ուշադրության է արժանի, նաև ըստ սեռի կրթական տարբեր մակարդակ ունեցողների բաշխվածության ցուցանիշները, համաձայն որոնց՝ եթե արական սեռի ներկայացուցիչների շրջանակում միջնակարգ կրթություն ունեցող անձանց մասնաբաժինը (52.7%) ընդամենը 3.4%-ով է գերազանցում իգական սեռի ներկայացուցիչների շրջանակում գրանցված արդյունքը (49.3%), ապա հակադարձ պատկեր է բարձրագույն կրթության մեջ (արական՝ 22.0%, իգական՝ 23.1%):

Կրթական բաղադրիչով հարմարվողականության կարողության գնահատման համար առանձնացվել է հարցման մասնակիցների շրջանակում 25 տարեկանից բարձր անձանց շրջանում միջնակարգ կրթություն ունեցողների տեսակարար կշիռը, որն այս հետազոտության կտրվածքով կազմում է 96.3%: Առողջապահական վիճակի բացահայտմանն ուղղված վերլուծական արդյունքները ցույց են տալիս, որ առնվազն 1 հաշմանդամություն ունեցող անձով տնային տնտեսությունների (այսուհետ S/S) տեսակարար կշիռը 25.2% է: Հաշմանդամություն ունեցող անձով տնային տնտեսությունների շրջանում ամենամեծ ներմարդային մասնաբաժինն ունի Գեղարքունիքի մարզը (39.8%), որին հաջորդում են Արարատի (31%) և Տավուշի (30%) մարզերը: Ամենացածր ցուցանիշը գրանցվել է Սյունիքում՝ կազմելով 7.2%: Քրոնիկ հիվանդություն ունեցող անդամով S/S-ների տեսակարար կշիռը 20.4% է: Այս դեպքում ամենամեծ ներմարդային մասնաբաժինը ունի Շիրակի մարզը (30.3%), ապա Արարատի (27.3%) և Լոռու մարզերը (23%): Այս դեպքում ևս ամենացածր ցուցանիշը դրասևորվում է Սյունիքում (2.4%): Հարցման մասնակիցների 17% նշել է, որ իրենք կամ իրենց S/S անդամները ունեն առողջա-

պահական ապահովագրություն: Բնակչության հարմարվողակա-  
նության կարողության գնահատման տեսանկյունից կարևոր է, նաև  
պարզել այն S/S-ների տեսակարար կշիռը, որոնք ունեն 65 տարե-  
կան և ավելի բարձր տարիքի անդամներ: Այս տարիքային խմբին  
պատկանող անձիք առավել խոցելի են փոփոխվող պայմանների  
նկատմամբ, և հետևաբար՝ նրանց առկայությունը S/S-ներում,  
բարձրացնում է վերջիններիս խոցելիությունը: Հարցումների համա-  
ձայն՝ ՀՀ խոշորացված համայնքներում բնակվող S/S-ների միայն  
46%-ն է, որ ունի 65 տարեկան և ավելի բարձր տարիքի առնվազն 1  
անձ:

Սոցիալ-տնտեսական բաղադրիչով խոցելիությունը պարզելու  
համար գնահատվել է հարցվածների շրջանում գործազուրկների  
կշիռը: Հարցման մասնակիցների 27.8% ապահովված է մշտական,  
11.3% ոչ մշտական (սեզոնային) աշխատանքով, իսկ ինքնազբաղ-  
ված կամ ձեռնարկատիրական գործունեությամբ է զբաղվում 18.3%:  
Միևնույն ժամանակ՝ հարցվածների 19.2% նշել է, որ գործազուրկ է,  
իսկ 14.2% ընդհանրապես չի աշխատել: Ջբաղվածության սեռային  
բաշխվածությունը ցույց է տալիս, որ արական սեռի ներկայացու-  
ցիչների շրջանակում մշտական (31.4%), ոչ մշտական աշխատանք  
(18%) ունեցողների և ինքնազբաղվածների (29.4%) տոկոսները ավե-  
լի մեծ են, քան այն համապատասխան ցուցանիշները, որոնք  
գրանցվել են իգական սեռի ներկայացուցիչների շրջանում (մշտա-  
կան աշխատանք՝ 25.4%, ոչ մշտական աշխատանք՝ 6.8%, ինքնազ-  
բաղվածություն՝ 10.7%): Հատկանշական է, որ հակառակ պատկերն  
է գործազրկության և չաշխատելու համատեքստում: Մասնավորա-  
պես իգական սեռի ներկայացուցիչների 21.7% և 21.4% համապա-  
տասխանաբար գործազուրկ են կամ չեն աշխատել և շարունակում  
են չաշխատել, մինչդեռ արական սեռի ներկայացուցիչների շրջա-  
նակում գործազրկությունը կազմում է 15.5% իսկ չաշխատելը՝ 3.7%:

Հարցման մասնակիցների 37.2% նշել է, որ իր S/S միջին ամսե-  
կան եկամուտը կազմում է 100001-200000 դրամ, 31.5%՝ մինչև  
100000, 25.3%՝ 200001-400000 և միայն 4.9%-ն է նշել, որ S/S ամսե-  
կան եկամուտը գերազանցում է 400000 ՀՀ դրամը: Հետաքրքրական  
է, որ ըստ մարզերի S/S ամսեկան եկամտի չափերի մասնաբաժին-  
ների, մինչև 100000 ՀՀ դրամ միջին ամսեկան եկամուտ ունեցող

S/S-ների մասով ներմարզային ամենամեծ մասնաբաժինը պատկանում է Լոռու մարզին (52.7%), որին հաջորդում են Արմավիրի (51.7%), Տավուշի և Արարատի (34.1%) մարզերը: 100001–200000 ՀՀ դրամ եկամուտ ունեցող S/S-ների շրջանում պատկերն այլ է: Այստեղ ամենամեծ ներմարզային ցուցանիշն ունի Գեղարքունիքը (52.1%), Տավուշը (47.2%) և Վայոց Ձորը (42.9%):

Վերլուծության են ենթարկվել նաև եկամտի ստացման հիմնական աղբյուրները՝ վերջիններս դիտարկելով ՀՀ առանձին մարզերի մակարդակում: Ստացված արդյունքների համաձայն՝ գյուղատնտեսությանը զբաղվողների տոկոսային ցուցանիշով առաջատար դիրք է գրավում Գեղարքունիքի մարզը, որտեղ ներմարզային ցուցանիշը 90.4% է: Գեղարքունիքին հաջորդում են Արագածոտնի, Սյունիքի և Շիրակի մարզերը, համապատասխանաբար 63.8%, 54.8% և 48.8%: Նշյալ պատկերը փոխվում է ձեռնարկատիրական գործունեության դեպքում, ուր ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Վայոց Ձորում (37.5%), իսկ ամենացածրը՝ Արագածոտնում (4.3%): Վարձու աշխատանք ունեցող S/S-ների համատեքստում առանձնանում է Սյունիքի մարզը, որտեղ ներմարզային ցուցանիշը 85.7% է: Այս ցուցանիշով երկրորդ, երրորդ և չորրորդ տեղերում են Կոտայքի (82.4%), Վայոց Ձորի (81.3%) և Շիրակի (76.7%) մարզերը: ՀՀ մարզերի խոշորացված համայնքների S/S-ների եկամուտների ձևավորման վրա իր ուրույն տեղն ունեն նաև արտերկրից տրամադրվող դրամական փոխանցումները: Արտերկրից ստացվող դրամական փոխանցումները, որպես իրենց S/S եկամտի աղբյուր նշել են Գեղարքունիքի մարզի հարցվածների 23.3%, Լոռու մարզի 17.6% և Շիրակի մարզի 16.3%: Ուշադրության է արժանի այն հանգամանքն, ըստ որի մի շարք մարզերում (օրինակ՝ Արագածոտն, Սյունիք, Վայոց Ձոր) հարցմանը մասնակցած և ոչ ոք չի մատնանշել վերոնշյալ աղբյուրը, ինչը կարող է, նաև պայմանավորված լինել ռուս-ուկրաինական պատերազմով և Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների սահմանմամբ: Այսպիսով, հարցման մասնակիցների 72.5% նշել է, որ իր S/S եկամուտը ձևավորվում է 2 և ավելի աղբյուրներից, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այս S/S-ները, ի տարբերություն եկամտի միայն մեկ աղբյուր ունեցող S/S-ների, առավել պաշտպանված են հնարավոր փոփոխություններից, որոնց արդյունք կարող են լինել եկամտի այս կամ

այն աղբյուրի կորուստը: S/S եկամուտների և դրանց կառուցվածքային բացվածքից զատ՝ կարևորվում են, նաև այն ծախսերի հետազոտությունը, որոնք շարունակական բնույթ ունեն և ձևավորում են եկամուտ-ծախս հարաբերակցությամբ պայմանավորվող շահույթը: Այդպիսի ծախսային մաս են կոմունալ ծախսերը: Համաձայն արդյունքների՝ հարցման մասնակիցների 79.6%-ը իր եկամուտների մինչև 30%-ն է ծախսում կոմունալ ծառայությունների համար, մինչդեռ 20.3% ծախսում է 31% և ավելի: Այս համատեքստում 31% և ավելի կոմունալ ծախսերի մասով ներմարզային ամենամեծ մասնաբաժինը գրանցվել է Կոտայքի մարզում (51.7%), որին հաջորդում են Լոռու (24.2%) և Գեղարքունիքի մարզերը (23.3%):

### 3. Խոցելիությունը տարածական վերահսկման համատեքստում

ՀՀ խոշորացված համայնքներում ՏԻՄ-երի կարողունակության և ժողովրդավարության գնահատման տեսանկյունից ուշադրության են արժանի դրանց գործունեության վերաբերյալ հանրայնորեն հասանելի երկրորդային տվյալները, որոնք առնչվում են թափանցիկության, հրապարակայնության և մասնակցայնության հետ: Համաձայն առկա տվյալների՝ ավագանու նիստերի առցանց հեռարձակում իրականացնող 63 համայնքների շրջանում ամենամեծ մասնաբաժինները Լոռու (17.5%) և Կոտայքի (15.9%) մարզերինն են<sup>14</sup>: Միաժամանակ ՏԻՄ-երի կողմից գործունեության հրապարակայնության և թափանցիկության բարձրացման համատեքստում, բացի նիստերի հեռարձակումից, տարբեր աղբյուրների միջոցով իրականացվում է տեղեկատվության հանրայնացում: Դրանք մասնավորապես վերաբերվում են համայնքային բյուջեների մասին տեղեկատվություններին, որոնք տարածվում են ցուցատախտակների, հեռուստատեսությամբ հեռարձակման, թերթերում տպագրման, ինչպես նաև կայքէջերում տեղադրման միջոցով: Տեղեկատվական աղբյուրների համաձայն իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ Կոտայքի մարզի ՏԻՄ-երը ամենաշատն են նախընտրում իրականացնել

14 Տե՛ս **ՏԿԵՆ**, «Ավագանու նիստերի առցանց հեռարձակում իրականացնող համայնքների ցանկը (01.09.2022թ. դրությամբ)», <https://www.mtad.am/pages/publicity-transparency-local-self-governance-including-sessions-community-councils>, (մուտք 11.07.2024):



հրապարակումներ՝ տեղեկույթի ցուցատախտակներին և տեսանելի այլ վայրերում տեղադրման միջոցով (18.7%), իսկ Տավուշի մարզում՝ տեղեկատվության հեռուստատեսությամբ տրամադրման տարբերակը (73.1%): Թերթերում տպագրության միջոցով հրապարակման տարբերակին առավել շատ դիմում են Լոռու մարզի ՏԻՄ-երը (33.3%), մինչդեռ ինտերնետային կայքէջերի սույն նպատակով կիրառումը առավել տարածված է Արարատում (18.2%): Կարևորվում է նաև ՏԻՄ-երի կողմից ավագանու դերակատարության ու պատասխանատվության բարձրացմանը միտված միջոցառումների իրականացումը: Հատկանշական է, որ ինչպես գործավարության մատյանի վարման, այնպես էլ ավագանու աշխատանքները կազմակերպելու համար առանձնացված աշխատասենյակի առկայության տեսանկյունից ամենամեծ թվով համայնքները (95 համայնք) ներկայացված են Արարատի մարզում, ինչը կազմում է մատյան վարող համայնքների ընդհանուր թվի 19.2% և համապատասխան աշխատասենյակ ունեցող համայնքների 21.6%<sup>15</sup>:

ԸՀ ՏԻՄ գործունեության հանրային թափանցիկության և հրապարակայնության տեսանկյունից իրենց ուրույն դերն ու նշանակությունն ունեն բնակիչների հետ ուղիղ շփումները, որոնք թույլ են տալիս ապահովել փոխադարձ վստահությունը և ստեղծել համագործակցության նոր ձևեր: Ընդունելությունները իրականացվում են ինչպես համայնքների ղեկավարների այնպես էլ ավագանու հետ: Երկրորդային տվյալների համաձայն՝ համայնքի ղեկավարների մոտ ամենաշատ թվով ընդունելությունները իրականացվել են Տավուշի մարզում (4381 այց կամ բոլոր մարզերում իրականացված այցերի 17.5%), իսկ ամենաքիչը Սյունիքում (823 այց կամ բոլոր մարզերում իրականացված այցերի 3.3%): Ավագանու մոտ ընդունելությունների մասով պատկերը այլ է: Այստեղ առաջատար է Շիրակի մարզը, որտեղ գրանցվել է 1018 այց կամ բոլոր մարզերի ՏԻՄ-երում գրանցված այցերի 32.7%: Մտահոգիչ է, որ Սյունիքի մարզում ընդհանրապես չեն գրանցվել այցեր, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ տեղի

15 Տե՛ս **ՏԿԵՆ**, «Անփոփ տեղեկանք 2021թ. 1-ին եռամսյակում ԸՀ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության վերաբերյալ», <https://www.mtad.am/pages/publicity-transparency-local-self-governance-including-sessions-community-councils>, (մուտք 11.07.2024):

համայնքների բնակչությունը գրկված է առաջին դեմքից տեղեկատվության ստացման և մտքերի փոխանակման նմանօրինակ եղանակից<sup>16</sup>:

ՏԻՄ ներկայացուցիչների կողմից իրականացված այցերի թվով առաջատար է Լոռու մարզը, որի համայնքների այցելությունների տեսակարար կշիռը կազմում է ՀՀ բոլոր մարզերում այցելությունների թվի 19.7%, իսկ ամենացածր տեսակարար կշիռները գրանցվել են Սյունիքի և Տավուշի մարզերում՝ համապատասխանաբար 3.8% և 3%: Սոցիալական աշխատողի կողմից S/S այցերի մասով ամենամեծ տեսակարար կշիռն ունի Արարատի մարզը, որտեղ բաժին է ընկնում բոլոր այցելությունների 34.9%: Այս դեպքում ամենացածր ցուցանիշը գրանցվել է Սյունիքի մարզում՝ կազմելով 2.3%: ՏԻՄ ներկայացուցիչների կողմից իրականավել են նաև այցեր նախադարձական և արտադարձական կրթության հաստատություններ: Առկա տվյալների համաձայն՝ այցելությունների ցուցանիշով առաջին տեղում է Լոռու մարզը՝ 21.1%-ով, որին հաջորդում են Գեղարքունիքի (18.9%) և Արարատի (15.1%) մարզերը: Համայնքային բնակչություն – ՏԻՄ հարաբերություններում ուշադրության են արժանի նաև կոնկրետ համայնքների վարչական տարածքներում բիզնես գործունեություն ծավալող ձեռնարկատերերի հետ հանդիպումների ցուցանիշները: Սույն ցուցանիշով ամենաբարձր տեսակակար կշիռը գրանցվել է Արարատի մարզում (27.2%), ամենացածրը՝ Սյունիքում (1.2%): Քննարկված ցուցանիշները ևս մեկ անգամ հավաստում են, որ Հայաստանի հարավային դարպաս համարվող Սյունիքի մարզի խոշորացված համայնքները, համեմատած այլ մարզերի համայնքների, առավել խոցելի են ՏԻՄ-տեղի բնակչություն հարաբերությունների թերզարգացածության պատճառով<sup>17</sup>:

Տարածքային կառավարման համատեքստում պետության կողմից ՀՀ բոլոր մարզերում 2018–2023 թվականների ընթացքում սուր-

---

16 Տե՛ս **ՏԿԵՆ** «ՀՀ մարզերի խոշորացված համայնքների ղեկավարների եվ ավագանու կողմից իրականացված ընդունելության քաղաքացիների թվաքանակը (2023 թ. 1-ին եվ 2-րդ եռամսյակ)», <https://www.mtad.am/pages/information-and-reports>, (մուտք՝ 11.07.2024):

17 Տե՛ս **ՏԿԵՆ** «Տեղեկատվություն միավորված համայնքների ՏԻՄ-երի իրականացրած աշխատանքների եվ ձեռքբերումների մասին (2023 թ. 1-ին եռամսյակ)», <https://www.mtad.am/pages/information-and-reports>, (մուտք՝ 11.07.2024):

սիդավորվել է 2202 համայնքային ծրագիր, իսկ տրամադրված սուբսիդիաների ընդհանուր գումարը կազմել է 136 մլրդ. 983 մլն. 649 հազ. 002 ՀՀ դրամ: Սուբսիդավորման 5-ամյա ժամանակահատվածում սուբսիդավորված ծրագրերի քանակով ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են 2020 և 2021 թվականների՝ կազմելով համապատասխանաբար 701 և 678 ծրագիր: Մինևույն ժամանակ՝ տրված սուբսիդիաների մեծությամբ ամենաբարձր ցուցանիշները դիտվել են 2022 (39 մլրդ. 883 մլն. 948 հազ. 241 ՀՀ դրամ) և 2023 (46 մլրդ. 119 մլն. 700 հազ. 141 ՀՀ դրամ) թվականներին: Ուշադրության են արժանի նաև սուբսիդավորված ծրագրերի և տրամադրված սուբսիդիաների բաշխումները ըստ մարզերի և տարիների: Ընդհանուրի նկատմամբ սուբսիդավորված ծրագրերի տեսակաբար կշիռների ժամանակային համեմատությունը ցույց է տալիս, որ եթե 2018թ. ամենաշատ թվով ծրագրերը սուբսիդավորվել են Գեղարքունիքում (26.5%), ապա 2023թ. սուբսիդավորված ծրագրերով առաջատար է Արարատի մարզը (22.5%): Տրամադրված սուբսիդիաների համատեքստում 2018թ. ամենամեծ մասնաբաժինը կրկին Գեղարքունիքի մարզին է (26.8%), սակայն 2022 և 2023թթ. առաջատար է Լոռու մարզը (2022թ.՝ 24.2% և 2023թ.՝ 17%)<sup>18</sup>:

Բացի համայնքային ծրագրերի սուբսիդավորումներից՝ իրականացվող փոփոխությունները նշանավորվում են նաև համայնքներում քաղաքացիների սպասարկման գրասենյակների (ՔՍԳ) հիմնումով և գործարկմամբ: Լինելով բազմաֆունկցիոնալ կառույցներ՝ ՔՍԳ-ները այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ դիմումների և գրությունների ընդունում, տեղական և պետական տուրքերի հաշվարկում/գանձում, տվյալների հաշվառում, տեղեկությունների տրամադրում, խորհրդատվություն, համայնքի ղեկավարի մոտ ընդունելության գրանցում ևն: Սույն ձեռնարկի համաձայն ՀՀ մարզերում գործող ՔՍԳ-ները պատկանում են կազմակերպական կառուցվածքի երկու հիմնական մոդելների: Առաջին մոդելը ենթադրում է, որ ՔՍԳ-ն ձևավորվում է համայնքապետարանի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներից (օրինակ՝ Աբովյանի ՔՍԳ-ն), իսկ երկրորդ մոդելում ՔՍԳ-ն հանդիսանում է համայնքապետարա-

18 Տե՛ս **ՏԿԵՆ**, «Սուբվենցիոն ծրագրեր (Դրամաշնորհներ)», դիտվել է 7 Հուլիսի 2024, <https://mtad.am/pages/subvention>, (մուտք՝ 07.07.2024) :

նի ստորաբաժանում (օրինակ՝ Վեդու ՔՍԳ-ն): ՔՍԳ-ների հիմնման և գործարկման ձեռնարկի առկայությունը թույլ է տալիս առանձին մարզերին և համայնքներին ձևավորել մեկ ընդհանուր տրամաբանությամբ գործող բազմաֆունկցիոնալ ծառայությունների մատուցման գրասենյակներ, որոնք մի կողմից՝ կթեթևացնեն համայնքատարանի աշխատանքային ծանրաբեռնվածությունը, իսկ մյուս կողմից՝ հնարավորություն կստեղծեն քաղաքացիներին իրենց համայնքներում առավել պարզեցված ընթացակարգով ստանալու անհրաժեշտ ծառայությունները: Ուշադրության է արժանի ՔՍԳ-ների մշտադիտարկման մեթոդաբանության և գործիքի, ինչպես նաև հանրության շրջանում մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ ընկալումների գործիքի մշակումը, որի միջոցով այդուհետ վերահսկելի են դառնում սույն գրասենյակների աշխատանքները: Այսպիսով, երկրորդային տվյալների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ 2023 թ. դրությամբ ՀՀ մարզերի 55 համայնքներում առկա են և/կամ կազմավորման փուլում են գտնվում թվով 74 ՔՍԳ: Ընդ որում, ՔՍԳ-ների ամենամեծ մասնաբաժինը պատկանում է Լոռու մարզին (17.6%), որին հաջորդում են Կոտայքի (14.9%), Շիրակի (10.8%) և Սյունիքի (9.5%) մարզերը<sup>19</sup>:

Գործող իրավական կարգավորումների կիրարկման արդյունքների գնահատման տեսանկյունից կարևոր են նաև ծառայությունների հասանելիությանը և որակին առնչվող ցուցանիշները: Հիմնական ծառայությունների հասանելիություն ունեցող տնային տնտեսություններում ապրող բնակչության համամասնության ժամանակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2017–2022 թթ. ընթացքում սույն ցուցանիշը աճել է գրեթե բոլոր ծառայությունների մասով: Մասնավորապես՝ կենտրոնական կոյուղուն հասանելիություն ունեցող S/S բնակչության համամասնությունը 69.8%-ից դարձել է 78.4%, աղբահանության հասանելիությունը՝ 91.7%-ից 95.7%, ինտերնետային կապը՝ 64.7%-ից 77%, իսկ էլեկտրաէներգիայի մատակարարումը՝ 99.7%-ից 100%: Աձել է, նաև մաքուր վառելիքից և

---

19 Տե՛ս **ՏԿԵՆ**, «ՏԻՄ-երի կողմից տրամադրվող հանրային ծառայություններ» 2023, <https://mtad.am/pages/application-information-technologies-municipalities>, (մուտք՝ 07.07.2024):

տեխնոլոգիայից առաջնային կախվածությունը՝ 57%-ից դառնալով 69.9%:

Ըստ բնակավայրի տիպի առկա տվյալների համաձայն, եթե քաղաքային բնակավայրերում կենտրոնական ջրամատակարարման հասանելիությունը գրանցել է չնչին նվազում (0.3%), ապա գյուղական բնակավայրերի դեպքում ցուցանիշի անկումը նկատելի է (6%): Հատկանշական է, սակայն, որ կենտրոնացված կոյուղու համակարգին հասանելիության համատեքստում գյուղական բնակավայրերում աճ է գրանցվել գրեթե 1.9 անգամ, մինչդեռ քաղաքային բնակավայրերում աճը կազմել է 0.3%: Նույն պատկերը աղբահանության հասանելիության առումով է: Գյուղական բնակավայրերում աճը կազմել է 10.7%, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 0.1%: Վերջապես, մաքուր վառելիքից և տեխնոլոգիայից առաջնային կախվածության շրջանակում գյուղական և քաղաքային բնակավայրերում գրանցված աճը կազմել է՝ համապատասխանաբար 26% և 9.4%<sup>20</sup>: Գյուղական բնակավայրերում աճի այսօրինակ ցուցանիշները տրամաբանական են, քանի որ քաղաքային բնակավայրերը ժամանակագրորեն ավել շուտ են հասել նման ցուցանիշների, որով պայմանավորված՝ յուրաքանչյուր հաջորդ տարում աճի տեմպը նվազել է:

Համացանցային կապի հասանելիության տեսնակյունից՝ գերաբազ (4G+/LTE Advanced) տեխնոլոգիական ծածկույթով ապահովված են ՀՀ բոլոր մարզերը, սակայն հասանելիության տարբեր մակարդակներ են գրանցվել ըստ օպերատորների: Մասնավորապես՝ առնվազն 2 օպերատորի հասանելիությամբ առաջատար է Արմավիրի մարզը (100%), որին հաջորդում են Շիրակի (97.3%), Կոտայքի (95.6%) և Տավուշի (95.4%) մարզերը: Ամենացածր հասանելիությունը գրանցվել է Վայոց Ձորում՝ կազմելով 78.2%: Միանգամից 3 օպերատորի հասանելիության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Տավուշում (75.4%), իսկ ամենացածրը Շիրակում՝ ընդամենը 6.1%<sup>21</sup>: Անլար լայնաշերտ ինտերնետային հասանելիության դեպքում պատկերը այլ է: Միայն 1 օպերատորի հասանելիություն ունեցող

20 Տե՛ս **ARMSTAT**, “Indicator 1.4.1 Proportion of Population Living in Households with Access to Basic Services”, <https://sdg.armstat.am/1-4-1/> (accessed 07.07.2024).

21 Տե՛ս **ՀՀ ՀԿԾԸ**, «Ցանցերի Հասանելիություն»,

[https://www.psrc.am/contents/fields/communications/com\\_communication-availability](https://www.psrc.am/contents/fields/communications/com_communication-availability) (մուտք՝ 07.07.2024)

բնակավայրերի շարքում ամենամեծ ներկայացվածությունն ունի Սյունիքի մարզը (26.7%), որում ներառվել է շուրջ 113 բնակավայր: Երկու օպերատորի հասանելիությամբ բնակավայրերի շարքում առաջատար է Արագածոտնի մարզը՝ 56 բնակավայրով (19.6%), իսկ 3 օպերատորի հասանելիությամբ բնակավայրերում 71 բնակավայրով առաջին հորիզոնականում է Արմավիրի մարզը (25%): Հարկ է նշել, որ դեռևս առկա են բնակավայրեր, որոնք չունեն անլար լայնաշերտ ինտերնետին հասանելիություն: Այդ բնակավայրերը բաժին են հասնում Սյունիքին (2 բնակավայր) և Վայոց Ձորին (5 բնակավայր)<sup>22</sup>:

Վերլուծվել են նաև մատուցվող ծառայությունների որակի ցուցանիշները գազի, էլեկտրաէներգիայի մատակարարման համար: Առկա տվյալների համաձայն՝ գազամատակարարման ընդհատումների միջին տևողությամբ առաջատար է Շիրակի մարզը (2079.1 ժամ/բաժանորդ), որին հաջորդում են Սյունիքի և Վայոց Ձորի մարզերը՝ համապատասխանաբար 1943.8 ժամ/բաժանորդ և 1755.3 ժամ/բաժանորդ արդյունքներով: Համեմատաբար առավել շահավետ դիրքերում է Տավուշի մարզը, որտեղ ընդհատումների միջին տևողությունը կազմել է 94.1 ժամ/բաժանորդ: Ընդհատումների միջին հաճախության մասով բարձր ցուցանիշներ են գրանցել միանգամից 3 մարզ. դրանք են՝ Շիրակի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերը (յուրաքանչյուրը՝ 1.7 ընդհատում/բաժանորդ): Ծառայությունների մատուցման ոչ պակաս կարևոր ցուցանիշ է նաև խափանումների վերականգնման միջին տևողությունը, համաձայն որի՝ ամենաերկար տևողությունները գրանցվել են Վայոց Ձորի (1844.8 ընդհատում/ժամ), Սյունիքի (1462 ընդհատում/ժամ) և Շիրակի (1243.5 ընդհատում/ժամ) մարզերում<sup>23</sup>: Էլեկտրաէներգիայի մատակարարումների խափանման տեսանկյունից հոսանքազրկումների միջին տևողությամբ առաջատար է Գեղարքունիքի մարզը (1805 րո-

---

22Տե՛ս **ՀՀ ՀԿԾՀ** «Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված կապի ծածկույթի (ներթափանցելիության) ապահովման աշխատանքների ընթացքի վերաբերյալ», [http://old.psrc.am/images/docs/sectors/Telecom/2018/%D4%B1%D5%B4%D6%80%D5%A1%D5%AF%D6%81%D5%BE%D5%A1%D5%AE\\_%D5%B0%D5%A1%D5%BD%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf](http://old.psrc.am/images/docs/sectors/Telecom/2018/%D4%B1%D5%B4%D6%80%D5%A1%D5%AF%D6%81%D5%BE%D5%A1%D5%AE_%D5%B0%D5%A1%D5%BD%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf), (մուտք՝ 07.07.2024) :

23Տե՛ս **ՀՀ ՀԿԾՀ**, «Սպասարկման Որակի ցուցանիշներ/Գազ»,

[https://www.psrc.am/contents/fields/gas/gas\\_service\\_quality\\_indicators](https://www.psrc.am/contents/fields/gas/gas_service_quality_indicators), (մուտք՝ 07.07.2024):

պե/բաժանորդ), որին հաջորդում են Արագածոտնի (1351.8 ռուպե/բաժանորդ) և Լոռու (1278.3 ռուպե/բաժանորդ) մարզերը: Այս դեպքում ամենացածր ցուցանիշը գրանցվել է Շիրակում՝ կազմելով 363.7 ռուպե/բաժանորդ: Գեղարքունիքի մարզը առաջին տեղում է նաև հոսանքազրկումների միջին հաճախականության ցուցանիշով, որը կազմել է 16.5 հոսանքազրկում/բաժանորդ, իսկ ամենացածր ցուցանիշը գրանցվել է Արարատի մարզում՝ կազմելով 2.6 հոսանքազրկում/բաժանորդ: Վերականգնման միջին տևողությունը ամենաբարձրը եղել է Լոռիում և Արագածոտնում (7.8 ընդհատում/ժամ), իսկ ամենացածրը՝ Վայոց Ձորում (5.4 ընդհատում/ժամ)<sup>24</sup>:

ՀՀ խոշորացված համայնքների բնակիչներին մատուցվող ծառայությունների և դրանց որակի տեսանկյունից դիտարկվում են, նաև ենթակառուցվածքների արդիականացման և միջավայրի բարեկարգմանն առնչվող տվյալները: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ 2018–2022թթ. ժամանակահատվածում ՀՀ բոլոր մարզերում նվազել են ջրագծերի փոփոխման կարիք ունեցող հատվածները: Մասնավորապես Սյունիքում գրանցվել է փոփոխման կարիք ունեցող հատվածների նվազման ամենաբարձր ցուցանիշը՝ 31.2%, իսկ ամենացածր ցուցանիշը՝ Գեղարքունիքում (4.2%): Ի տարբերություն ջրագծերի՝ կոյուղագծերի հարցում առանձնանում են Տավուշի և Գեղարքունիքի մարզերը, որպես փոփոխման կարիք ունեցող հատվածների ամենաբարձր նվազման տոկոս արձանագրած մարզեր (համապատասխանաբար 4.4% և 4%): Հատկանշական է, որ Կոտայքի և Սյունիքի մարզերում նկատվել է հակառակ միտումը՝ գրանցվելով 0.1% աճ: Վերջապես, փողոցների և անցումների բարեկարգման արդյունքների վերլուծությամբ պարզվում է, որ 2018թ.–ի համեմատ 2023թ.–ին ընդհանուր տարածությունում բարեկարգված տարածությունների մասնաբաժնի աճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Արագածոտնի մարզում՝ կազմելով 18%: Արագածոտնի մարզին հաջորդում են Գեղարքունիքի (12.2%) և Արմավիրի (6.5%) մարզերը: Հատկանշական է, որ Սյունիքի և Շիրակի մարզերում

24 Տե՛ս նաև ՀՀ ՀԿԾԸ, «Սպասարկման Որակի Ցուցանիշներ/Էլեկտրական Էներգիա», [https://www.psrc.am/contents/fields/electric\\_energy/el\\_energy\\_service\\_quality\\_indicators](https://www.psrc.am/contents/fields/electric_energy/el_energy_service_quality_indicators), (մուտք՝ 07.07.2024):

նկատվել է սույն ցուցանիշի անկում: Սյունիքում անկումը 11.8% է, իսկ Շիրակում՝ 0.3%<sup>25</sup>:

**Ամփոփելով** ստացված արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ հարավային մարզեր Վայոց Ձորը և Սյունիքը և դրանցում ձևավորված խոշորացված համայնքները, համեմատած մնացյալ մարզերի բնակավայրերի, առավել խոցելի են յուրաքանչյուր հնարավոր փոփոխությունների նկատմամբ, քանի որ ունեն առավել խոցելի ենթակառուցվածքներ և տրամադրվող ծառայությունների ցածր որակ: Խնդիրները տեսանելի են հատկապես համացանցի հասանելիության, դրա տրամադրման դիվերսիֆիկացվածության, փոփոխման կարիք ունեցող կոյուղագծերի, փողոցների և անցումների բարեկարգման համատեքստում: Զուգահեռաբար դիտարկելով 2022–2023թթ. պետության կողմից համայնքային սուբսիդավորման ընդհանուր հատկացումներում Վայոց Ձորի և Սյունիքի մասնաբաժինները՝ պարզվում է, որ վերջիններս նկատելի անկում են գրանցել (Վայոց Ձոր՝ 80.4%-ով, իսկ Սյունիք՝ 33.1%-ով):

#### 4. Տեղի զգացման, տարածական ներգրավվածության և տեղի առաջնորդության հիմքերով բազմաչափ խոցելիությունը

Ունենալով տարածական կազմակերպման, վերահսկողության և սոցիալ–տարածական պլանավորման ինդիկատորների միջոցով ՀՀ խոշորացված համայնքներում տեղի ունեցող տարաբնույթ գործընթացների հետազոտությամբ, ինչպես նաև այդ ինդիկատորների միջոցով կանխատեսող վերլուծությունների իրականացմամբ հավաքագրված տեղեկատվությունը՝ տարածքային կառավարման վերոնշյալ չափումների միջոցով տարածքային կառավարման սոցիալ–տարածական պրակտիկաների ողջ համակարգի նկարագրման համարստեղծվում են նոր հնարավորություններ: Այս համատեքստում կիրառված երկմակարդակ կլաստերիզացիայի միջոցով դուրս են բերվել այն փոփոխականները, որոնք կարող են ներառվել կլաստերիզացիոն հետազա մոդելում: Այդ փոփոխականներն են՝ տեղի զգացումը, տարածական ներգրավվածությունը և տեղի ա-

---

25Տե՛ս ԱՐՄՍՍՏԱՏ, «Արցախի Ոլորտ» 2022,

[https://armstat.am/file/article/marzer\\_2023\\_15.pdf](https://armstat.am/file/article/marzer_2023_15.pdf), (մուտք՝ 20.04.2024):



ռաջնորդությունը: Այս փոփոխականները կառուցվել են վերջիններիս չափման համար ձևավորված ինդիկատորների գումարային գնահատականների միջոցով և ուստի ենթարկվում են հարաբերությունների սանդղակավորման: Մինչև կլաստերիզացիան հաշվարկվել է փոփոխականների միջև կապի ուժգնությունը, որը կարող է էական ազդեցություն ունենալ կլաստերների ձևավորման և որակի վրա: Քանի որ բոլոր փոփոխականները ոչ նորմալ են բաշխված, հետևապես նրանց միջև կապի ուժգնության հաշվարկն իրականացվել է Սպիրմենի գործակցով: Հաշվարկները ցույց են տալիս, որ տեղի զգացման, տարածական ներգրավվածության և տեղի առաջնորդության բոլոր հնարավոր զույգերում առկա են նշանակալի բայց ոչ մեծ ուժգնությամբ կապեր: Մասնավորապես, տեղի զգացման և տարածական ներգրավվածության միջև կապի ուժգնությունը 0.51 է, տեղի զգացման և տեղի առաջնորդության միջև՝ 0.36, իսկ տարածական ներգրավվածության և տեղի առաջնորդության միջև՝ 0.39: Ստացված տվյալների հիման վրա իրականացվել է երկքայլանի կլաստերային վերլուծություն՝ կիրառելով հեռավորության չափման Էվկլիդյան մեթոդը և կլաստերիզացման Շվարց-Բայեզյան ցուցանիշը (BIC): Առավելագույն ձգբրտության կլաստերներ ստանալու համար բոլոր փոփոխականները ստանդարտացվել են, ինչպես նաև 25% միջակայքում ֆիքսվել է հնարավոր աղմուկը (ծայրահեղ արժեքներ):

Կառուցված կլաստերային մոդելը դուրս է բերել երկու կլաստեր, որոնցով իրականացվող տվյալների խմբավորման միջին ձգբրտությունը (Silhouettescore) 0.58 է: Երկու կլաստերները միասին վերցրած՝ ներկայացնում են 351 դեպք, ինչը կազմում է ընդհանուր դեպքերի 61.9%: Առաջին կլաստերին բաժին է ընկնում դեպքերի 59%, իսկ երկրորդին՝ 41%. այսինքն՝ կլաստերների ծավալների հարաբերակցությունը 1.44 է: Կլաստերների ձևավորման գործում ներառված փոփոխականների կարևորության հաշվարկները ցույց են տալիս, որ կարևորության 100% ցուցանիշը պատկանում է տեղի առաջնորդությանը, 72.9%՝ տեղի զգացմանը և 64.5%՝ տարածական ներգրավվածությանը: Առավել մանրամասն հետազոտելով ըստ կլաստերների փոփոխականների գրանցած միջին ցուցանիշները՝ պարզվում է, որ համեմատած երկրորդ կլաստերի, որտեղ տեղի զգացման միջին արժեքը 63.19 է, տարածական ներգրավվածությունը

նը՝ 39.33 և տեղի առաջնորդությունը՝ 17.06՝ առաջին կլաստերում ցուցանիշները բոլոր փոփոխականներով առավել բարձր են (տեղի զգացում՝ 71.14, տարածական ներգրավվածություն՝ 47.68 և տեղի առաջնորդություն՝ 29.91): Հետաքրքիր է, որ միջին ցուցանիշների ամենամեծ տարբերությունը գրանցվել է ըստ տեղի առաջնորդության (12.85), իսկ ամենափոքր տարբերությունը՝ տեղի զգացման (7.95) դեպքում (Աղյուսակ 1):

**Աղյուսակ 1: Առանձնացված կլաստերներն ու դրանցում փոփոխականների միջին ցուցանիշները**

Կլաստեր	Տեղի զգացում		Տարածական ներգրավվածություն		Տեղի առաջնորդություն	
	Միջին	Ստ. շեղում	Միջին	Ստ. շեղում	Միջին	Ստ. շեղում
1	71.14	3.369	47.68	4.482	29.91	4.408
2	63.19	4.193	39.33	3.928	17.06	5.146

Առկա տվյալների հիման վրա կառուցվել են երկչափ նկարագրական աղյուսակներ՝ ըստ կլաստերների մարզերի և խոշորացված համայնքների հնարավոր խմբավորումները պարզելու համար: Ստացված արդյունքների համաձայն՝ Արագածոտնի, Արարատի, Կոտայքի, Տավուշի և Շիրակի մարզերը առավելապես ընդգրկվել են առաջին կլաստերում, իսկ Գեղարքունիքի մարզը՝ երկրորդ կլաստերում: Մինչև նույն ժամանակ՝ Աշտարակ, Ակունք, Հրազդան և Մասիս խոշորացված համայնքները առավելապես ընդգրկվել են առաջին կլաստերում, իսկ Գավառ խոշորացված համայնքը՝ երկրորդ (Աղյուսակ 2):

**Աղյուսակ 2: Կլաստերային խմբերը ըստ մարզերի և խոշորացված համայնքների**

Մարզ	Կլաստեր 1	Կլաստեր 2
Արագածոտն	74.2%	25.8%
Արարատ	64.3%	35.7%
Կոտայք	83.6%	16.4%
Տավուշ	63.6%	36.4%
Շիրակ	67.9%	32.1%
Գեղարքունիք	18.6%	81.4%
<b>Խոշորացված համայնք</b>		
Աշտարակ	74.2%	25.8%

Ակունք	88.2%	11.8%
Հրագդան	81.6%	18.4%
Մասիս	64.3%	35.7%
Գավառ	18.6%	81.4%

Այսպիսով, առանձին կլաստերներում փոփոխականների միջին ցուցանիշների դրսևորումները, ինչպես նաև կլաստերիզացման արդյունքում խմբավորված մարզերն ու խոշորացված համայնքները թույլ են տալիս եզրակացնել, որ առաջին կլաստերում խմբավորված բնակավայրերի բնակիչները ցուցաբերում են տեղի զգացման և տարածական ներգրավվածության բարձր աստիճան, ինչպես նաև հիմնականում առավել շատ են վստահում և գոհ են իրենց բնակավայրերի առաջնորդներից, քան երկրորդ կլաստերում ներառված բնակավայրերը:

### Եզրակացություններ

Ինչպես տարածական կազմակերպման, այնպես էլ սոցիալ-տարածական պլանավորման և տարածական վերահսկողության տվյալներից արձանագրվում է, որ Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում առկա է բազմաչափ խոցելիություն, ինչը այդ մարզերի խոշորացված համայնքներն ու այդ համայնքները կազմող բնակավայրերը հնարավոր փոփոխությունների նկատմամբ պակաս ձկուն է դարձնում: Այս պայմաններում առավել քան երբևէ կարևորվում են զարգացման առանձին ընթացակարգերի մշակումը, որոնք, կապվելով ՀՀ մարզերի զարգացման ընդհանուր սկզբունքների հետ, կմշտադիտարկեն և օպերատիվորեն կարձագանքեն նշյալ մարզերի բնակավայրերում տեղի ունեցող յուրաքանչյուր զարգացման: Միևնույն ժամանակ՝ խոշորացված համայնքների բնակիչների շրջանում տեղի առաջնորդության, տեղի զգացման և տարածական ներգրավվածության գրանցված ցուցանիշներով կլաստերիզացայի արդյունքում առանձնացված երկու կլաստերներում փոփոխականների միջինացված ցուցանիշների, ինչպես նաև ՀՀ մարզերի և խոշորացված համայնքների խմբավորումները ցույց տվեցին, որ Արագածոտնի, Արարատի, Կոտայքի, Տավուշի, Շիրակի մարզերի և,

մասնավորապես, Աշտարակի, Ակունքի, Հրազդանի և Մասիսի խոշորացված համայնքների բնակիչները դրսևորում են տեղի զգացման և տարածական ներգրավվածության բարձր աստիճան, ինչպես նաև հիմնականում առավել շատ են վստահում և գոհ են իրենց բնակավայրերի առաջնորդներից, քան Գեղարքունիքի մարզի և հատկապես Գավառ խոշորացված համայնքի բնակիչները: Սա լրացուցիչ մտածելու տեղիք է տալիս տեղի բնակչության համայնքային կյանքին ու համայնքի զարգացման ծրագրերին մասնակցության մասին, որի համատեքստում կարիք կա իրականացնելու հետազոտություններ, որտեղ առավել մանրամասն հետազոտվեն տեղի զգացման, տարածական ներգրավվածության և տեղի առաջնորդության բաղադրիչները՝ թիրախավորելով սույն մարզը և դրա խոշորացված համայնքները:

**Վահան Վ. Ենգիդունյան** – զբաղվում է տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաների ուսումնասիրությամբ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է տարածության սոցիոլոգիան, տարածական պլանավորման և մասնակցային կառավարման հայեցակարգերը, ինչպես նաև երիտասարդության սոցիոլոգիան:

Էլ. փոստ՝ [vahan.engidunyan@ysu.am](mailto:vahan.engidunyan@ysu.am)

Summary

## **RESIDENTIAL VULNERABILITY IN THE CONTEXT OF TERRITORIAL MANAGEMENT**

An example of RA regions and enlarged communities

**Vahan V. Yengidunyan**

**Keywords** - Enlarged community, region, territorial governance, vulnerability, spatial organization, socio-spatial planning, spatial control, cluster analysis, adaptive capacity, sense of place, spatial engagement, local leadership.

From the point of view of the territorial management of settlements, primary importance is given to the creation of a comfortable and functional environment for the residents. Territorial management of settlements is quite a

sensitive process, because each unjustified change can significantly harm the daily operations of the residents, increasing the vulnerability of the settlement in the context of possible changes. From the point of view of the above-mentioned risks management, it is more important than ever to harmonize the professional approaches of territorial management strategy development with the endogenous and exogenous factors of settlement reproduction. Since territorial management is manifested in the dimensions of spatial organization, socio-spatial planning and spatial control, then the process of harmonization is logically derived from the realities in these dimensions. The process of community enlargement has been completed in RA and the methodological and procedural features of its implementation allow us to assume that there is an unequal distribution based on vulnerability, both in RA regions and in enlarged communities. Taking into account the possible negative impact of the above-mentioned assumption on the stable operation of settlements, as well as the lack of research knowledge aimed at this issue, the research was conducted to identify the most vulnerable regions of the Republic of Armenia and enlarged communities in the context of territorial governance, as well as to identify the characteristics of the manifestation of vulnerability in these settlements.

As a result of the research, it became clear that inequality according to vulnerability in RA regions and enlarged communities is observable in the context of spatial organization, socio-spatial planning and spatial control. In particular, the analysis of demographic and socio-economic indicators at the level of spatial organization makes it clear that on average Syunik and Vayots Dzor regions have the smallest number of inhabitants per settlement. Parallely, the highest score of population dispersion in the enlarged communities was recorded in the Tatev enlarged community of Syunik. The picture is the same, also in the context of the comparative analysis of employment and education indicators in settlements. In particular, if in the case of employment there are labor and labor resources, then in the case of education, there is student attendance per public educational institution, which also records the lowest scores in the Vayots Dzor region. The highly unequal population distribution between the southwestern and southern regions of RA is a significant risk for managing the resources and opportunities of the territories. The uncontrollable processes of urbanization, in the context of which the population is concentrated in specific settlements, violates the principle of ensuring equal opportunities for the development of settlements, because in the perspective of short-term strategy, it is not advisable to implement large-scale projects in settlements with a decreasing population. It is interesting that, if the

vulnerability of Vayots Dzor and Syunik regions is more emphasized in the dimension of spatial organization compared to other regions, then in the context of socio-spatial planning, Gegharkunik region stands out with multidimensional vulnerability. The vulnerability of Gegharkunik region is manifested, in particular, in terms of health conditions and average monthly income of households. Finally, the most vulnerable enlarged communities and settlements with the spatial control component belong to Syunik and VayotsDzor. The vulnerability of these regions in terms of spatial control is especially evident in the state-local government-residents relationship, where local residents meet and interact with the local government rarely and the state's subsidies to the settlements of these regions are the smallest. At the same time, in these regions, there is the lowest quality of public services.

The vulnerability of RA regions and enlarged communities was investigated, also by clustering indicators of sense of place, spatial engagement and local leadership, which are considered components of socio-spatial planning and spatial control. The obtained results prove that only Gegharkunik region belongs to the cluster with relatively low indicators and Gavar is the only enlarged community belonging to this cluster. The obtained results prove that there is multidimensional vulnerability in Gegharkunik, Syunik and Vayots Dzor regions, which makes the enlarged communities of these regions and the settlements that make up these communities less flexible to possible changes. In these conditions, more than ever, the development of separate territorial development procedures is important, which, in connection with the general principles of the development of the RA regions, will monitor and promptly respond to every change taking place in the settlements of the mentioned marzes.

## УЯЗВИМОСТЬ НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ В КОНТЕКСТЕ ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ На примере регионов и расширенных общин РА

Ваган В. Енгидунян

**Ключевые слова** - Расширенное сообщество, марз, территориальное управление, уязвимость, пространственная организация, социально-пространственное планирование, пространственный контроль, кластерный анализ, адаптивная способность, чувство места, пространственная вовлеченность, местное лидерство.

С точки зрения территориального управления населенными пунктами первостепенное значение отводится созданию комфортной и функциональной среды для местного населения. Территориальное управление населенными пунктами является достаточно чувствительным процессом, поскольку каждое неоправданное изменение может существенно навредить повседневной деятельности местного населения, повышая уязвимость населенного пункта в условиях возможных изменений. С точки зрения управления указанными рисками как никогда важно гармонизировать профессиональные подходы разработки стратегии управления территорией с эндогенными и экзогенными факторами воспроизводства поселений. Поскольку территориальное управление проявляется в измерениях пространственной организации, социально-пространственного планирования и пространственного контроля, то процесс гармонизации логически вытекает из реалий в этих измерениях. В РА завершился процесс расширения общин и методологические и процедурные особенности его реализации позволяют предположить, что существует неравномерное распределение по уязвимости как в регионах РА, так и в расширенных общинах. Принимая во внимание возможное негативное влияние вышеупомянутого предположения на стабильное функционирование населенных пунктов, а также отсутствие исследовательских знаний по этому вопросу, было проведено исследование по выявлению наиболее уязвимых регионов Республики Армения и расширенных общин в контексте территориального управления, а также выявить особенности проявления уязвимости в данных населенных пунктах.

В результате исследования стало ясно, что неравенство по уязвимости в марзах и расширенных общинах РА наблюдается в контексте пространственной

организации, социально-пространственного планирования и пространственного контроля. В частности, анализ демографических и социально-экономических показателей на уровне пространственной организации показывает, что в среднем регионы Сюник и Вайоц Дзор имеют наименьшее количество жителей на поселение. Параллельно самый высокий показатель дисперсии населения в расширенных общинах зафиксирован в Татевской расширенной общине Сюника. Та же картина и в контексте сравнительного анализа показателей занятости и образования в населенных пунктах. В частности, если в случае трудоустройства это труд и трудовые ресурсы, то в случае образования – посещаемость студентов на одно государственное образовательное учреждение, которые также фиксируют самые низкие показатели в марзе Вайоц Дзор. Крайне неравномерное распределение населения между юго-западными и южными марзами РА представляет собой значительный риск для управления ресурсами и возможностями территорий. Неконтролируемые процессы урбанизации, в условиях которых население концентрируется в конкретных поселениях, нарушают принцип обеспечения равных возможностей развития поселений, поскольку в перспективе краткосрочной стратегии нецелесообразно реализовывать крупномасштабные проекты в населенных пунктах с уменьшающимся населением. Интересно, что если уязвимость марзов Вайоц Дзор и Сюник более выражена в измерении пространственной организации по сравнению с другими марзами, то в контексте социально-пространственного планирования марз Гегаркуник выделяется многомерной уязвимостью. Уязвимость Гегаркуникского марза проявляется, в частности, в состоянии здоровья и среднем месячном доходе домохозяйств. Наконец, наиболее уязвимые укрупненные общины и населенные пункты с компонентом пространственного контроля относятся к Сюнику и Вайоц Дзору. Уязвимость этих марзов с точки зрения пространственного контроля особенно очевидна в отношениях государство-местное самоуправление-жители, где местные жители встречаются и взаимодействуют с местным самоуправлением редко, а субсидии государства населенным пунктам этих марзов наименьшие. В то же время в этих марзах наблюдается самое низкое качество общественных услуг.

Уязвимость марзов и расширенных сообществ РА была исследована, в том числе путем кластеризации показателей чувства места, пространственной вовлеченности и местного лидерства, которые считаются компонентами социально-пространственного планирования и пространственного контроля. Полученные результаты доказывают, что только марз Гегаркуник относится к кластеру с относительно низкими показателями, а Гавар является единственной расширенной общиной, входящей в этот кластер. Полученные результаты доказывают, что в марзах Гегаркуник, Сюник и Вайоц Дзор существует многомерная уязвимость, что делает расширенные сообщества этих марзов и населенные пункты,



входящие в эти сообщества, менее гибкими к возможным изменениям. В этих условиях, как никогда, важна разработка отдельных процедур территориального развития, которые в связи с общими принципами развития марзов РА будут отслеживать и оперативно реагировать на каждое изменение, происходящее в населенных пунктах упомянутых марзов.

### Օգտագործված գրականություն

1. **ARMSTAT**, “Indicator 1.4.1 Proportion of Population Living in Households with Access to Basic Services”, <https://sdg.armstat.am/1-4-1/> (accessed 07.09.2024).
2. **Bosher L. S., Chmutina K.**, Disaster Risk Reduction for the Built Environment, 1st ed. (Wiley, 2017), 267p., <https://doi.org/10.1002/9781119233015>.
3. **CARE International**, “Framework of Milestones and Indicators for Community-Based Adaptation” (CARE Climate Change, 2022), 19p. <https://careclimatechange.org/wp-content/uploads/2022/12/2022-CARE-Framework-of-Milestones-and-Indicators-for-CBA-Copy.pdf>.
4. **Colledge M., Parker C., et al.**, “Place Leadership in English Local Authorities: A Critical Success Factor for Vital and Viable High Streets,” Research Report (UK: Manchester Metropolitan University, New York University, November 2022), 26 p. <https://squidex.mkmapps.com/api/assets/ipm/place-leadership-in-english-local-authorities-hstf.pdf>.
5. **Edgemon L., Freeman C., et al.**, “Community Resilience Indicator Analysis: County-Level Analysis of Commonly Used Indicators From Peer-Reviewed Research” (USA: Argonne National Laboratory, 2018), 88p. [https://www.researchgate.net/publication/331232094\\_Community\\_Resilience\\_Indicator\\_Analysis\\_County-Level\\_Analysis\\_of\\_Commonly\\_Used\\_Indicators\\_From\\_Peer-Reviewed\\_Research](https://www.researchgate.net/publication/331232094_Community_Resilience_Indicator_Analysis_County-Level_Analysis_of_Commonly_Used_Indicators_From_Peer-Reviewed_Research).
6. **Hummon D. M.**, “Community Attachment: Local Sentiment and Sense of Place.,” in Place Attachment, ed. Irwin Altman and Setha Low, Reprint of the original 1 st ed. (S.I.: Springer US, 2012), pp.253-278.
7. **Jakku E., Lynam T.**, “What Is Adaptive Capacity?” Report for the South East Queensland Climate Adaptation Research Initiative (Australia: CSIRO Climate Adaptation National Research Flagship, 2010), 21p., [https://www.researchgate.net/publication/259117037\\_What\\_is\\_adaptive\\_capacity](https://www.researchgate.net/publication/259117037_What_is_adaptive_capacity).
8. **Yengidunyan V. V.**, Territorial Management in The Sphere of Social-Spatial Planning, Spatial Organization and Control as A Practice of Reproduction of The Social Space Journal of Sociology: Bulletin of Yerevan University 2024, Vol. 15, No. 1(39), pp.73-84, <https://doi.org/10.46991/BYSU:F/2024.15.1.073>
9. **ԱՐՄՍՏԱՏ**, «Աշխատանքային Ռեսուրսներ» 2022, [https://armstat.am/file/article/lab\\_market\\_2023\\_1.pdf](https://armstat.am/file/article/lab_market_2023_1.pdf), (մուտք՝ 20.04.2024)
10. **ԱՐՄՍՏԱՏ**, «Աշխատանքային Ռեսուրսներ/Աշխատուժ» 2022, [https://armstat.am/file/article/lab\\_market\\_2023\\_2.pdf](https://armstat.am/file/article/lab_market_2023_2.pdf), (մուտք՝ 20.04.2024)
11. **ԱՐՄՍՏԱՏ**, «Բնակարանային Ֆոնդը 2018 Թվականին» 2018, [https://armstat.am/file/article/sv\\_06\\_19a\\_5250.pdf](https://armstat.am/file/article/sv_06_19a_5250.pdf). (մուտք՝ 20.04.2024)

12. **ԱՐՄՍՏԱՏ**, «ՀՀ Բնակարանային Ֆոնդը և Կոմունալ Տնտեսությունը 2019թ.» 2019, [https://armstat.am/file/article/bn\\_fond\\_2020\\_1.pdf](https://armstat.am/file/article/bn_fond_2020_1.pdf). (մուտք՝ 20.04.2024)
13. **ԱՐՄՍՏԱՏ**, «ՀՀ Բնակարանային Ֆոնդը և Կոմունալ Տնտեսությունը 2020թ.» 2020, [https://armstat.am/file/article/bnakfond\\_2021\\_1.pdf](https://armstat.am/file/article/bnakfond_2021_1.pdf). (մուտք՝ 20.04.2024)
14. **ԱՐՄՍՏԱՏ**, «ՀՀ Բնակարանային Ֆոնդը և Կոմունալ Տնտեսությունը 2021թ.» 2021, [https://armstat.am/file/article/housing\\_stock\\_2021\\_1\\_am.pdf](https://armstat.am/file/article/housing_stock_2021_1_am.pdf). (մուտք՝ 20.04.2024)
15. **ԱՐՄՍՏԱՏ**, «ՀՀ Բնակարանային Ֆոնդը և Կոմունալ Տնտեսությունը 2022թ.»», [https://armstat.am/file/article/housing\\_stock\\_2022\\_1\\_am.pdf](https://armstat.am/file/article/housing_stock_2022_1_am.pdf). (մուտք՝ 20.04.2024)
16. **ԱՐՄՍՏԱՏ**, «Սոցիալական Ոլորտ» 2022, [https://armstat.am/file/article/marzer\\_2023\\_15.pdf](https://armstat.am/file/article/marzer_2023_15.pdf), (մուտք՝ 20.04.2024)
17. **ԱՐՄՍՏԱՏ**, «Տարածքային Վիճակագրություն», <https://armstat.am/am/?nid=130>, (մուտք՝ 07.07.2024)
18. **ՀՀ ՀԾԿԸ**, «Հայաստանի Հանրապետության Բնակավայրերում Հանրային Անրակցված Կապի Ծածկույթի (Ներթափանցելիության) Ապահովման Աշխատանքների Ընթացքի Վերաբերյալ» [http://old.psrc.am/images/docs/sectors/Telecom/2018/%D4%B1%D5%B4%D6%80%D5%A1%D5%AF%D6%81%D5%BE%D5%A1%D5%AE\\_%D5%B0%D5%A1%D5%BD%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf](http://old.psrc.am/images/docs/sectors/Telecom/2018/%D4%B1%D5%B4%D6%80%D5%A1%D5%AF%D6%81%D5%BE%D5%A1%D5%AE_%D5%B0%D5%A1%D5%BD%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf), (մուտք՝ 07.07.2024)
19. **ՀՀ ՀԾԿԸ**, «Սպասարկման Որակի Ցուցանիշներ/Գազ», [https://www.psrc.am/contents/fields/gas/gas\\_service\\_quality\\_indicators](https://www.psrc.am/contents/fields/gas/gas_service_quality_indicators), (մուտք՝ 07.07.2024)
20. **ՀՀ ՀԾԿԸ**, «Սպասարկման Որակի Ցուցանիշներ/Էլեկտրական Էներգիա», [https://www.psrc.am/contents/fields/electric\\_energy/el\\_energy\\_service\\_quality\\_indicators](https://www.psrc.am/contents/fields/electric_energy/el_energy_service_quality_indicators), (մուտք՝ 07.07.2024)
21. **ՀՀ ՀԾԿԸ**, «Ցանցերի Հասանելիություն», [https://www.psrc.am/contents/fields/communications/com\\_communication-availability](https://www.psrc.am/contents/fields/communications/com_communication-availability) (մուտք՝ 07.07.2024) 2024
22. **ՏԿԵՆ**, «Անփոփ տեղեկանք 2021թ. 1-ին եռամսյակում ՀՀ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության վերաբերյալ», <https://www.mtad.am/pages/publicity-transparency-local-self-governance-including-sessions-community-councils>, (մուտք՝ 11.07.2024)
23. **ՏԿԵՆ**, «Ավագանու նիստերի առցանց հեռարձակում իրականացնող համայնքների ցանկը (01.09.2022 թ. դրությամբ)», <https://www.mtad.am/pages/publicity-transparency-local-self-governance-including-sessions-community-councils>, (մուտք՝ 11.07.2024)
24. **ՏԿԵՆ**, «ՀՀ մարզերի խոշորացված համայնքների ղեկավարների եվ ավագանու կողմից իրականացված ընդունելության քաղաքացիների թվաքանակը (2023թ. 1-ին եվ 2-րդ եռամսյակ)», <https://www.mtad.am/pages/information-and-reports>, (մուտք՝ 11.07.2024)

25. **ՏԿԵՆ**, «Սուբվենցիոն ծրագրեր (Դրամաշնորհներ)», <https://mtad.am/pages/subvention>, (մուտք՝ 07.07.2024)
26. **ՏԿԵՆ**, «Տեղեկատվություն միավորված համայնքների ՏԻՄ-երի իրականացրած աշխատանքների եվ ձեռքբերումների մասին (2023թ. 1-ին եռամսյակ)», <https://www.mtad.am/pages/information-and-reports>, (մուտք՝ 11.07.2024)
27. **ՏԿԵՆ**, «ՏԻՄ-երի կողմից տրամադրվող հանրային ծառայություններ» 2023, <https://mtad.am/pages/application-information-technologies-municipalities>, (մուտք՝ 07.07.2024)

## REFERENCES

1. **ARMSTAT**, «Ashkhatank'ayin Resursner/Ashkhatuzh» 2022, [https://armstat.am/file/article/lab\\_market\\_2023\\_2.pdf](https://armstat.am/file/article/lab_market_2023_2.pdf), (mutk՝ 20.04.2024) **(In Armenian)**.
2. **ARMSTAT**, «Ashkhatank'ayin Resursner» 2022, [https://armstat.am/file/article/lab\\_market\\_2023\\_1.pdf](https://armstat.am/file/article/lab_market_2023_1.pdf), (mutk՝ 20.04.2024) **(In Armenian)**.
3. **ARMSTAT**, «Bnakaranayin Fondë 2018 Tvakanin» 2018, [https://armstat.am/file/article/sv\\_06\\_19a\\_5250.pdf](https://armstat.am/file/article/sv_06_19a_5250.pdf), (mutk՝ 20.04.2024) **(In Armenian)**.
4. **ARMSTAT**, «HH Bnakaranayin Fondë ev Komunal Tntesutyunë 2019t.» 2019, [https://armstat.am/file/article/bn\\_fond\\_2020\\_1.pdf](https://armstat.am/file/article/bn_fond_2020_1.pdf). **(In Armenian)**.
5. **ARMSTAT**, «HH Bnakaranayin Fondë ev Komunal Tntesutyunë 2020t.» 2020, [https://armstat.am/file/article/bnakfond\\_2021\\_1.pdf](https://armstat.am/file/article/bnakfond_2021_1.pdf). **(In Armenian)**.
6. **ARMSTAT**, «HH Bnakaranayin Fondë ev Komunal Tntesutyunë 2021t.» 2021, [https://armstat.am/file/article/housing\\_stock\\_2021\\_1\\_am.pdf](https://armstat.am/file/article/housing_stock_2021_1_am.pdf), **(In Armenian)**.
7. **ARMSTAT**, «HH Bnakaranayin Fondë ev Komunal Tntesutyunë 2022t.» 2022, [https://armstat.am/file/article/housing\\_stock\\_2022\\_1\\_am.pdf](https://armstat.am/file/article/housing_stock_2022_1_am.pdf). **(In Armenian)**.
8. **ARMSTAT**, «Sots'ialakan Olort» 2022, [https://armstat.am/file/article/marzer\\_2023\\_15.pdf](https://armstat.am/file/article/marzer_2023_15.pdf), (mutk՝ 20.04.2024) **(In Armenian)**.
9. **ARMSTAT**, «Taratsk'ayin Vichakagrut'yun», <https://armstat.am/am/?nid=130>, (mutk՝ 07.07.2024) **(In Armenian)**.
10. **HH HTSKH**, «Hayastani Hanrapetut'yan Bnakavayrerum Hanrayin Amraks'tvats Kapi Tsatskuyt'i (Nert'ap'ants'eliut'yan) Apahovman Ashkhatank'neri Ėnt'ats'k'I Veraberyal», [http://old.psrc.am/images/docs/sectors/Telecom/2018/%D4%B1%D5%B4%D6%80%D5%A1%D5%AF%D6%81%D5%BE%D5%A1%D5%AE\\_%D5%B0%D5%A1%D5%BD%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf](http://old.psrc.am/images/docs/sectors/Telecom/2018/%D4%B1%D5%B4%D6%80%D5%A1%D5%AF%D6%81%D5%BE%D5%A1%D5%AE_%D5%B0%D5%A1%D5%BD%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf), (mutk՝ 07.07.2024) **(In Armenian)**.
11. **HH HTSKH**, «Spasarkman Olorti Ts'uts'anishner/Elektrakan Energiya», [https://www.psrc.am/contents/fields/electric\\_energy/el\\_energy\\_service\\_quality\\_indicators](https://www.psrc.am/contents/fields/electric_energy/el_energy_service_quality_indicators), (mutk՝ 07.07.2024) **(In Armenian)**.
12. **HH HTSKH**, «Spasarkman Olorti Ts'uts'anishner/Gaz», [https://www.psrc.am/contents/fields/gas/gas\\_service\\_quality\\_indicators](https://www.psrc.am/contents/fields/gas/gas_service_quality_indicators), (mutk՝ 07.07.2024) **(In Armenian)**.
13. **HH HTSKH**, «Ts'ants'eri Hasaneliut'yun», [https://www.psrc.am/contents/fields/communications/com\\_communication-availability](https://www.psrc.am/contents/fields/communications/com_communication-availability), (mutk՝ 07.07.2024) **(In Armenian)**.

14. **TKEN**, «Amp'op' teghekank' 2021t. 1-in eramsyakum HH hamaynk'nerum teghakan ink'nakaravarman marminneri gortsuneut'yan hrarakaynut'yan ev t'ap'ants'ikut'yan veraberyal», <https://www.mtad.am/pages/publicity-transparency-local-self-governance-including-sessions-community-councils>, (mutk'' 11.07.2024) **(In Armenian)**.
15. **TKEN**, «Avaganu nisteri artsants herardzakum irakanatsnogh hamaynk'neri tsankë (01.09.2022t. drut'yamb)», <https://www.mtad.am/pages/publicity-transparency-local-self-governance-including-sessions-community-councils>, (mutk'' 11.07.2024) **(In Armenian)**.
16. **TKEN**, «HH marzeri khoshorats'vats hamaynk'neri ghekavarneri ev avaganu koghmits' irakanats'vats ëndunelut'yan k'aghak'ats'ineri t'vak'anakë (2023t. 1-inev 2-rd eramsyak)», <https://www.mtad.am/pages/information-and-reports>, (mutk'' 11.07.2024) **(In Armenian)**.
17. **TKEN**, «Subvents'ion tsragrer (Dramashnorhner)», <https://mtad.am/pages/subvention>, (mutk'' 07.07.2024) **(In Armenian)**.
18. **TKEN**, «Teghekatvut'yun miavorvats hamaynk'neri TIM-eri irakanats'rats ashkhatank'neri ev dzerk'berumneri masin (2023t. 1-in eramsyak)», <https://www.mtad.am/pages/information-and-reports>, (mutk'' 11.07.2024) **(In Armenian)**.
19. **TKEN**, «TIM-eri koghmits' tramadvogh hanrayin tsarayut'yunner» 2023, <https://mtad.am/pages/application-information-technologies-municipalities>, (mutk'' 07.07.2024) **(In Armenian)**.